ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3678-Ա « 28 » հուլիսի 2026թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա) ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության, Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ապրիլի 18-ի N 522-Ա և 526-Ա որոշումների պահանջները, ինչպես նաև ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝

1. Երևան քաղաքի Բաբաջանյան-Աշտարակի խճուղի ճանապարհային հատվածի մինչև 270 մետր (կմ 1+820-ից մինչև կմ 1+980՝ գումարած 110 մ մոտեցնող ճանապարհներ) անավարտ հատվածի կառուցման նպատակով շինարարական աշխատանքների և այդ աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների գնման գործընթացներն իրականացնել «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ «Հրատապ մեկ անձից» գնում կատարելու ձևով:

2. Հրավերները տրամադրել միայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված՝ գնման հայտերում նշված անձանց (հնարավոր մասնակիցներին):

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի վրա:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ